ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

29 մարտի 2018 թվականի N 39-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՈՒՄ ՄԱՅՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԵՂԵՑԿՈՒԹՅԱՆ ՏՈՆԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ «ԿԱՊԱՆԻ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ ՍՈՒԲՍԻԴԻԱ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997թ. մայիսի 6-ի «Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին» ՆՀ-728 հրամանագրի 1.12 կետի «բ» և 1.19 կետի «ա» ենթակետերով, համաձայն «Հայաստանի Հանրապետության 2018 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի «Մշակութային միջոցառումների իրականացում» ծրագրով ՀՀ Սյունիքի մարզպետարանին նախատեսված հատկացումների՝

ո ր ո շ ու մ ե մ.

1. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզում Մայրության և գեղեցկության տոնին նվիրված միջոցառում կազմակերպելու նպատակով «Կապանի մշակույթի կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությանը հատկացնել 900.000 (ինը հարյուր հազար) ՀՀ դրամ՝ նրա հետ կնքելով հանձնարարության պայմանագիր:

2. Հաստատել Մայրության և գեղեցկության տոնին նվիրված միջոցառումների կազմակերպման ծախսերի նախահաշիվը՝ համաձայն հավելվածի:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ **Վ. ՀԱԿՈԲՅԱՆ**

2018թ. մարտի 29
ք. Կապան

Հավելված
ՀՀՍյունիքիմարզպետի
2018թ. մարտի 29-ի
N 39- Որոշման

Ծախսերինախահաշիվ

Մայրության և գեղեցկության տոնին նվիրված միջոցառման

h/h	Ծախսերիանվանումը	Հոդված	Գումարը /հազարդրամ/
1	Ընդհանուրբնույթիայլծառայություններ	4239.00	900.0
	Ընդամենը		900.0

ՀՀ Սյունիքի մարզպետարանի
աշխատակազմիղեկավարԷ.Սարգսյան